

ԶԱՅԼՏ ԿԱՐՈՒՄՆԻ ՈՒՂԵՒՈՐ ՈՒԹԻՒՆՆԸ

CXX

Օ՛ր, Սեր, բընակիչ չես դու մեր երկրի,
Անեսա Սերովբէ, կը հաւատանք բայց —
Հաւատք՝ որուն վկայք բեկուած սրտերի
Տէրերն են — թէն բնաւ ինչ չեն տեսած,
Ոչ ալ պիտի՝ տեսնեն իրենց աշխով բաց,
Զի մտքին տուածն է այս անուն ու նշանք
Քեզի, նաեւ ողջ երկնի բընակչաց՝
Իր քուգածին պէս՝ հոգիին անմար
Իբրեւ այցընկեր — այրուած, նզմուած, պոկուած, յոգնա-
սպառ :

CXXI

Հիւանդ է միտքն՝ իր սեպհական գեղով,
Եւ կեղծ ըսեղծման ջերմին մէջ է ան :
Ո՛ւր են աներն, որ հանճարին շողով
Կու տայ արձանագործն լոկ : Կրնա՞յ գեղն այն՝
Բընութիւնը տալ : Ո՛ւր՝ պարմանութեան
Թովչանքն մեր յղացին ... : Զայն իրացնելու
Մեր հասունութեան ... մեր վըհասութեան՝
Ճիգին մէջ, դրախտին չհասնող՝ գրել – վրձնելու
Եւ զայն յաղթական էջով նորէն ծաղկեցնելու :

CXXIII

Սիրողն կ'մոլեգնի ... բայց դեղն զայն բուծող՝
Դառն է սոսկայի երբ կը փակէ ան :
Մաս – մաս պատմութեան մեր կուռքն զարդարող,
Եւ մենք կ'տեսնենք թ'ալ արժէք, գեղ չկան
Մտնն դուրս. իսէալ անն մտքին մէջ է միայն
Որ մերթ կ'կապէ մեր Գիրն եւ մերթ կը մղէ առաջ՝
Ցանած հովերէ՛ն հնձելու բորան :
Հագիւ թ'ալ փմիայի փորձերն ըսկըսած՝
Յամառ սիրտն մտն մրցանակին՝ դեռ ոչինչ ըրած :

CXXIV

Մանկութենէ մենք կը թօշխմենք, մինչեւ
Հիւանդ, շնչահաս, մեր ծառան անյագ,
Հուսկ փայտաւոր մեր գոյութիւնն, թէն

Ձերդ շուրջ դիւթող մնայ դեռ նախկին պատահանք.
 Բայց շա՛հ ուր ... ուրեմն կրկնակ նըզովանք
 Սէր, համբաւ, սին փառք եւ ազահութիւն —
 Ողջ, ունայն, հիւանդ, իրար՝ չափ անաղք,
 Իյնող աստղեր, տարբեր, բայց էութեամբ նոյն,
 Մահն ալ՝ սեւ մուխ՝ ուր կ'անհետի բոցը լուսոյն:

CXXV

Քիչեր — ոչ ոք — են սիրածնին զսնող,
 Թէպէտ պատահմունք — կոյր հանդիպում, հզօր
 Պէտք սիրոյ ըլլան հակադրանքն վանող —
 Բայց շա՛հ չանցած՝ ետ կու գայ թունաւոր
 Անսրբագրելի Չարիքը, ինչ՝ որ
 Պայմաններ՝ մըղող այն ծրուստեղծող
 Չասուածն՝ Չարիքի, անհոգի ըստոր.
 Վերջն ալ անթացույթ օգնութեան զրկող ...
 Տեսնո՞ւ որոնց կ'ընէ Յոյսը փոշի, իսկ փոշին կոխած հող:

CXXVII? (CXXVI սխալը գրին մէջ է)

Բայց խորհինք անվախ — բանականութեան
 Լըքումն է ըստոր՝ հրաժարումն յաւէտ
 Մեր մտածման շնորհքէն, ապաւինութեան
 Մեր վերջին դիրքէն — «Այս իմա է դեռ գէթ»,
 Ծնունդէն՝ երկնային մեր շնորհն եւեթ,
 Կապուած, չարչարուած մէջ խռիւճի մ' բանտին,
 Սնուած մութին մէջ, նիւթն, որ լուսաւէտ
 Չըլլայ թէ շողայ անպատահան մտքին
 Եւ ներխուժէ հոն, զի խելք, ժամանակ բոյժ եւ կոյր աչքին:

CXXVIII

Կամարք իրար վշայ, գոգցես Հռոմ — քաղաք,
 Հաւաքելով ողջ ռազմաւարքն ցեղին,
 Յոյց է դրեր զանոնք նոյն զմբէթին տակ,
 Քոլոգիտման անդ, տակն լուսնի շողին
 Ձերդ ջահին բնական (լոյսով կ'ողողուի)
 Չ'աստուածային է՝ ինչ հոն կը հոսի,
 Որ քննուած թ'եւ, դեռ հանք է մտածողին,
 Եւ կապոյտ ու խոր երազ մտւոյ ...
 Իտալական ցայգերանգներ՝ որոնք կը խօսին:

CXXIX

Քեզ՝ խորհրդաւոր երկնքի մասին,

Որ կը ծածանի եւ կու տայ ըսուեր՝
 Հրաւարի ու լայն այդ փառքի յուրին.
 Երկրի բաներուն է ոգեգգալ տուիլ
 Ու ժամանակն է քիչ մ'անոթի պլլեր,
 Կոտրեր՝ օգնութեան պարզած իր մանգաղն:
 Ոյժ կայ մոգական բերդին մէջ աւեր,
 Իրուն պալատն այս ժամուս անյապաղ
 Պիտ' յանձնէ պերճանքն, սպասէ որ դարերն ըլլան օծիտ չմնաղ:

CXXX

Մեռելները գեղեցկացնող դուն ժամանակ,
 Դուն աւերակներն զարդարող, սփոփող
 Սիրսն արնահոս եւ զայն բուժող միակ,
 Ժամանա՛կ, մեր դիւր դատումներն նրբող,
 Միակ իմաստասէր՝ նիւղն ու սէրն փորձող,
 Քեզմէ զատ սոփեստ ողջ. դուն խնայասէր,
 Կ'ուշանաս թէեւ՝ բայց չես վրնասող,
 Ժամանա՛կ վրիժառու, կ'ուղեմ ձեռքերս վեր,
 Աչքերս ու սիրս ու կը բաղձամ քեզմէ նըւեր,

CXXXI

Միջեւ աւերածիդ այդ մատունքին
 Եւ այս տանաւէն Աստուծմէ լրբուած,
 Մէջն ընծաներու պերճ՝ տե՛ս աւերն եմ,
 Տարիներով քիչ, բայց ցաւով լրցուած —
 Եթէ դուն գոռոզ ըլլալս ես տեսած,
 Մի՛ լսեր զիս երբեք, իսկ եթէ հանդարտ
 Կրած եմ ցաւս հըպարտ, յիշերու դիմաց
 Ու չեմ ընկնրուած, ուրեմն թող երկաթն
 Այս՝ զուր կըրած չըլլայ հոգիս — Զը սրգան անդ:

CXXXII

Դուն, մեծդ Նեմեսիս, որ բնաւ կեփուն դեռ,
 Մարդոց իրաւանց, անտես չես թողած,
 Հոս՝ ուր նախնիք քեզ պատիւ են ըրեր,
 Դուն կատաղիներն վիհէն դուրս բերած,
 Որիտէսի շուրջ ռոնալ ես տըրած,
 Այն անբընական հատուցման համար . . .
 (Երնէ՛կ թ'օտար ձեռք մ'ըլլար հատուցած):
 Արդ, քեզ կը կանչեմ, փոքին մահուան ա՛լ
 Թօթուէ: Լսէ սըրտիս — Արթընցի՛ր, պիտի ելլես անպատճառ:

Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԼՈՐԻՏ ՊԱՅՐԸՆ

(Շարունակելի)